


դար վերաբերմունքի դէպի իրանց աղջիկ զաւակները, որոնց «ուրիշի ապրանք» են համարում և աշխատում են շուտով գլխից հանել, չմտածելով հետեանքի մասին: Յայտնի է, որ երբ ամուսինները հիւանդանում են, մարդիկ իրանց ամուսիններին յետ են ուղարկում շատ անգամ հերանց տուն, ուր շատերը երկար տանջուելով մահանում են, իսկ այր ամուսինները ապօրինի կենակցում են ուրիշ կանանց հետ: Այդ փաստ է, որ ընդհանրապես է, մանաւանդ շնորհիւ նրա, որ քահանայք իրանք զրկուելով ամուսիններից, ապօրինի կենակցութիւն են ունենում:

Աւելի քան հասունացած է այն հարցը, որ քահանաներին թոյլատրուի կրկնամուսնութիւն, որը թէ ազգային և թէ բարոյական տեսակէտից մի անհրաժեշտութիւն է: Փաստ է, որ քահանան չի կարող առանց ամուսնու, մանաւանդ եթէ սա ունի երեխաներ, ապրել. վասն որոյ նրանք պարտաւորեալ պահում են իրր տան անտեսուելիներ, որոնցից յաճախ ունենում են երեխաներ: Պահանջել քահանաներից, մանաւանդ գիւղական՝ լինել «սուրբ» նշանակում է սպասել անկարելին. քահանան՝ նախ և առաջ մարդ է մարդկային բնախօսական պահանջներով և այլն: Կրկնում ենք, պէտք է կրկնամուսնութիւն թոյլատրել քահանաներին. և ես համոզուած եմ, որ հայ ինտելիգենտ և բանիմաց զասակաբզը՝ թէ հոգևոր և թէ աշխարհական՝ չի բողոքիլ դորա դէմ:

(Շարունակելի)

բժ. Բ. Աղասարեան



Ն Ո Ր — Ն Ա Ն Ի Զ Ե Ի Ա Ն Ի

ԵԿԵՂԵՑ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ 1913 Թ. ՀԱՇԻԻԸ.

Վերջին տարիներս «Արարատ»ի էջերում աշխատել ենք համառօտ տեղեկութիւններ հաղորդել Ն. Նախիջևանի Հայոց աղքատախնամ հոգաբարձութեան գործունէութեան մասին, որը մեր Ռուսահայոց մէջ ազգային-հասարակական բնոյթ կրող ամենահամակրելի և արդիւնաւէտ գործունէութիւն ցոյց տուող հաստատութիւններից մէկն է:

Իւրաքանչիւր տարի այդ հոգաբարձութիւնը իւր հաշիւները ներկայացնելով քաղաքի վեց եկեղեցիներից ընտրուած վաթսուսն պատգամաւորների ընդհանուր ժողովին, ապա մանրամասն հաշիւ է հրատարակում նաև, թէ հայերէն և թէ ռուսերէն, հասարակական բոլոր խաւերին ևս

մատչելի դարձնելու համար իւր գործունէութեան նկարագիրը: Եւ զուցէ հէնց այդ է այն պատճառներից մէկը, որ եկ. Հոգաբարձութիւնը դարձել է մի համակրելի և կատարեալ վստահութիւն ներշնչող հաստատութիւն:

Անցեալ տարիների նման այս տարի էլ Հոգաբարձութիւնը հրատարակել է իւր նախընթաց (1913) տարուայ գործունէութեան տեղեկագիրը, որի մասին մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ աւելորդ չենք համարում:

Անցեալ 1913 թ. ընթացքում եկ. Հոգաբարձութիւնը մուտք ունեցել է մի հարիւր ութ հազար եօթը հարիւր իննը ռուբլի 92 կոպ. (108,709 ռ. 92 կ.), որը գոյացել է հետեւեալ եկամտի աղբիւրներից:

Ա. Անշարժ կալուածներից 91,007 ռ. 90 կ.

Այս կալուածներից ամենախոշորը Ռաստովում ունեցած Բայլշայա Սագովայա փողոցի վրայի մեծ տունն է, որ բերել է 50,622 ռ., իսկ երկրորդ տեղը բռնում է Եկատերինագարի շէնքը, որ բերել է 15,408 ռ. 82 կ., ապա Հաղարեանի տան վարձագիրն 7000 ռ.: Այս բաժնի մէջ է մտած նաև Հնդկաստանի կալկաթա քաղաքում Մ. Բաբաշանի կտակով թողած կալուածքի եկամուտի կէս մասը, որը նշանակուած է 9998 ռուբլի, այսինքն 6248 ռուբլի, սակայն այս գումարը կազմում է այդ կալուածից վերջին հինգ տարուայ ընթացքում չգանձուած արդիւնքը: Այս առթիւ պէտք է ասել, որ Մ. Բաբաշանը իւր կալուածը կտակով թողել է 1794 թուին, բայց երկար տարիներ Ն. Նախիջևանցիք չեն կարողացել օգտուել նրանից, մինչև որ արժանայիշատակ Միք. Նալբանդեանցը անցեալ դարի կէսերին անձամբ գնալով Հնդկաստան, գործը կանոնաւորում է մասամբ, և Ն. Նախիջևան քաղաքը, արտաքին գործերի մինիստրութեան միջոցով պարբերաբար ստանում է իրեն հասանելի արդիւնքը: Թէպէտ եկ. Հոգաբարձութիւնը քաղաքից ստանում էր այդ գումարը, սակայն իրաւատէր չէր. իրաւունքի տէրը քաղաքն էր. բացի այդ, եկ. Հոգաբարձութիւնը ոչ մի որոշ տեղեկութիւն չունէր այդ կալուածների մասին: Այս տարուայ հաշուից երևում

է, որ Եկ. Հոգաբարձութիւնը յատկապէս այդ դործի համար Հնդկաստան է ուղարկում պ. Յովակիմ Բեդեկեանին, որին աջողոււմ է անգլիական դատարանի առաջ յիշեալ կտակի տէր ճանաչել տալ Եկ. Հոգաբարձութիւնը, այլ և մանրամասն և ճշգրիտ տեղեկութիւններ ներկայացնում Մ. Բաբաջանի կալուածի մասին:

	Ռ.	Կ.
Բ. Մշտական աւանդներից	190	—
Գ. Ժամանակաւոր աւանդադրամներից	536	39
Դ. Ընթացիկ հաշուով	114	52
Ե. Ճերմակեղէնի դպրոց-արհեստանոցից	1180	9
Զ. Նուիրաբերութիւններից	2337	8
է. Զանազան հասոյթներից	7076	82
Ը. Տոկոսաբեր թղթերից	5645	12

Եկեղեցական Հոգաբարձութիւնը նոյն 1913 թ. ընթացքում ելք է ունեցել իննսունհինգ հազար վեց հարիւր եօթանասուն երեք ռուբլի 21 կ. (95,673 ռ. 21 կ.), որից ծախսուած է.

Ա. Թողակաւոր սաներ պահելու վրայ	15,496	—
Բ. Նպաստներ ուսման համար	2,745	—
Գ. Հանդերձազին չքաւոր աշակ.	1,209	—
Դ. Ուսման պիտոյք չքաւոր աշակ.	65	—
Ե. Նպաստ ծխական դպրոցներին	6920	—
Զ. Դպրոցական Ֆոնդին	1000	—
է. Մանկապարտէզին նպաստ	300	—
Ը. Վանայ Վարազայ դպրոցին	550	—
Թ. Կանանց կար ու ձևի արհեստանոցին	250	—
Ժ. Ճերմակեղէնի արհեստանոցի պահպանութեանը 3700 —		

Այսպէսով ուրեմն կրթական նպատակների համար ծախսուած է ընդամենը մօտ 32,235 ռ.: Նշանակում է, որ Հոգաբարձութիւնը թողակաւորներ պահում է ինչպէս հայոց ծխական և միջնակարգ դպրոցներում, այնպէս և պետական միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներում: Որ Հոգաբարձութիւնը առանց սխտեմի և պատահական կերպով չէ ծախսում իւր տրամադրութեան տակ եղած գումարները, հապա

ձգտում է որոշ նպատակի, այդ երևում է նաև հետևեալ որոշումներից. — Հոգաբարձութիւնը «աչքի առաջ ունենալով, որ մեր զպրանոցներն ընդհանրապէս զգալի պէտք ունին կարող և իրաւատէր մանկավարժ դասատուներու, սահմանեց 1913 թ. երկրորդ կէս տարուանէն ունենալ արտասահմանեան մէկ թոշակ՝ յատկապէս մեր ազգային միջնակարգ վարժարաններու համար մանկավարժներ և մասնագէտ ուսուցիչներ պատրաստելու նպատակով»: Այլ և տառերի զիւտի և տպագրութեան յօբելեանների առթիւ որոշուած է «հիմնել մէկ թոշակ այն հայ երիտասարդներու համար, որոնք կուզենային կամ Ս. Պետերբուրգի համալսարանի արևելեան Փակուլտետի մէջ կատարելագործուել հայկաբանութեան և հայկական հին ու նոր զպրութեան, պատմութեան և հնագիտական ուսմունքներու մէջ, և կամ եւրոպական համալսարաններէն մէկու մը մէջ մասնագիտութիւն ուսուցնասիրել մանկավարժութիւնը իւր յարակից ճիւղերով»: Եւ այդ երկու որոշումներն էլ գործադրուած են անմիջապէս:

Մնացեալ զուժարները ծախսուած են.

Թ. Զբաւորների խնամարկութեան համար մօտ 21,250 ո.

Սրա մէջ են դրամական միանուագ օգնութիւն (1000 ո.), մնայուն օգնութիւն (1984 ո.), նիւթեղէնով (թէյ, շաքար, ալիւր, իւղ, միս, հաց, քարածուխ, ճրագալուցի սեղան հայ զինուորներին—1773 ո.) և այլն:

Ժ. Հոգեկան հիւանդների, անկելանոցի և որբա-

նոցի պահպանութեան համար . 16,497 ո. 67 կ.

Հոգեկան հիւանդ ունեցել են 4 հոգի, անկելանոցի մէջ 86 հոգի, պատասպարանի մէջ 2 հոգի, (1 ուսուցիչ և 1 դպիր) որբանոցի մէջ 30 հոգի: Պէտք է ասել, որ որբանոցում մնացողները միաժամանակ ստանում են ուսում և դաստիարակութիւն:

ԺԱ. Կտակների համաձայն տրուած է . 444 ո.

ԺԲ. Կալուածական և վարչական ծախս 35,427 ո. 50 կ.

Այս յօդուածի մէջ մասնում են պետական, զնահատական տուրքերը, ապահովագրութիւնը, նորոգութիւններ-

ըր, շինութիւնները, պարտքերի հատուցումն, դատական ծախքեր, պ. Բեդելեանի Հնդկաստան գնալու և դատ վարելու ծախքերը (5858 ու.) և այլն:

ԺԳ. Խորհրդարանի ծախս (պաշտօնեաներ, զինւանական, և այլն) 5625 ու. 78 կ.

Առ 1 յունուարի 1914 թ. մնում է յաւելեալ գումար 13,036 ու. 71 կ.:

Եկ. Հոգաբարձութեան հրատարակած սոյն հաշուի մէջ զետեղուած են, բացի ընդհանուր հաշուից, նաև մանրամասն տեղեկութիւններ ու անուանացուցակներ, որոնցից իւրաքանչիւր ոք կարող է ծանօթանալ Եկ. Հոգաբարձութեան կազմի, ժողովների թուի, սան ու սանուհիների (ովքեր են, ում անուան սան են, որտեղ են ուսանում), կարևոր որոշումների հետ: Այլ և կան մանրամասն տեղեկութիւններ Հոգաբարձութեան հաստատութիւնների, չքաւորներին խնամարկելու եղանակի, թոշակների ու նպաստների բաշխման ու քանակի, նուիրատուների ցանկի և նուէրի քանակութեան մասին.

1913 թ. ընթացքում Եկ. Հոգաբարձութիւնը խոշոր կտակներ չէ ստացել. միայն հանգուցեալ Տ. Խաչատուրբազմաշխատ աւ. քահանայի մահուան առթիւ՝ նրա անուան ֆոնդ կազմելու համար ստացուած է Գէորդ Բաքալեանից 6000 ու. և պսակ դնելու փոխարէն զանազան անձերից ու հաստատութիւններից 793 ուրբի: Մի տարի առաջ ևս նոյն քահանայի յիսնամեայ յոբելեանի առթիւ նրա անուան ֆոնդի համար կար կազմուած 1500 ուրբի:

Որ Եկ. Հոգաբարձութիւնը հետզհետէ զարգանում է և առաջադիմում, այդ երևում է նրա տեղեկագրների հէնց չոր ու ցամաք թուերից էլ. — նախընթաց 1912 թ. նրա եկամուտն էր 88,197 ու. 19 կ., իսկ 1913 թուին 108,709 ու.:

Բնականաբար աւելացել են նաև ծախսերը, այսպէս՝ կրթական նպատակների համար մօտ 2500 ու., չքաւորների խնամարկութեան համար մօտ 4200 ու., կալուածական և վարչական ծախքերի համար մօտ 11,300 ու. և այլն:

Եկ. Հոգաբարձութեան կազմի մասին արդէն անցեալ

ներում գրած լինելով, աւելորդ ենք համարում կրկնութիւն անելը:

Գծաբաղաբար մեր ձեռքի տակ չունենալով ինչպէս Ն. Նախիջևանի միւս ընկերութիւնների ու հաստատութիւնների, նոյնպէս նաև Կովկասահայ մի երկու խոշոր ընկերութիւնների հաշիւները, հնարաւորութիւն չունինք համեմատութիւններ և ընդհանուր եզրակացութիւններ անելու:

Եկ. Հոգաբարձութիւնը հայերէն հաշիւը հրատարակելու հետ միաժամանակ հրատարակել է նաև ռուսերէն հաշիւ, որը ներկայացնում է մի ընդարձակ քաղուածք նրա հաշուապահական մատեաններից: Այդտեղ աւելի պարզ կերպով պատկերացած են Հոգաբարձութեան բոլոր կայքերի ու գոյքերի հաշիւները, նրանց ինչ վիճակի մէջ գտնուածը, նրանց գնահատական և իսկական արժէքը, նրանց բերած եկամուտը, նրանց վերայ եղած պարտքերը, փոխառութիւնները, եկամուտը ինչ նպատակի գործադրուածը և այլն:

Զցանկանալով աւելի մանրամասնութեան մէջ մտնել, ընթերցողի հետաքրքրութեան համար յիշատակենք, որ առ 1 յունուարի 1914 թուի Հոգաբարձութեան անշարժ կայքերի արժէքը գնահատուած է 746,368 ռ. 74 կ., շարժական կայքը 10,624 ռ. 40 կ., տոկոսաբեր թղթերը 146,634 ռ. 6 կ., մշտական աւանդադրամը 5000 ռ., ժամանակաւոր աւանդադրամը 11,246 ռ. 28 կ., հին դրամները 1000 ռուբլի և այլն, ընդամենը 941,398 ռ. 80 կ.:

Սակայն եկ. Հոգաբարձութիւնը ունի նաև մի բաւական խոշոր պարտք—95,234 ռ. 68 կ., որը նա վերցրել է Պետական բանկից՝ գրաւ դնելով իւր ձեռին եղած արժէթղթերի մի մասը: Այդ պարտքը առաջ է եկել այն հանգամանքից, որ եկ. Հոգաբարձութիւնը ցանկանալով իւր եկամտի աղբիւրներն աւելացնել, շարունակ հոգս է տարել, որպէս զի կտակով թողնուած շէնքերը վերանորոգէ կամ վերաշինէ: Այսպէս, օրինակ, նա վերոյիշեալ խոշոր գումարը պարտք վերցնելով, կամ, աւելի լաւ է ասել,

փոխառութիւնը անելով, գործադրել է եկատերինադարում հանգուցեալ Քարասուլեանի թողած կայքի վերաշինութեան վրայ, որով այդ կայքի արժէքն էլ բարձրացել է և 17,611 ո. 47 կոպէկից դարձել 138,947 ո. 19 կ., որից 38,881 ո. 53 կ.-ը Քարասուլեանի դրամն է, իսկ մնացեալ 100,065 ո. 66 կ. պարտք վերցրած գումար: Բնականաբար կայքի եկամուտն էլ անհամեմատ աւելացել է: Միևնոյն եզանալով են շինուած նաև Ռաստովի յայտնի շէնքը, որ այժմ 50,000 եկամուտ է բերում, մինչդեռ առաջ միայն մի քանի հազար էր բերում, և ուրիշները: Աւելորդ է ասել, որ Հոգաբարձութիւնը տարէց տարի զեղչում է իւր պարտքը՝ յոկոսներով հանդերձ և այդ բանը ոչ մի կերպով արգելք չէ լինում կտակների ճշգրիտ գործադրութեանը, մինչդեռ մի քանի տարի յետոյ, երբ Հոգաբարձութիւնն ազատուած կլինի իւր պարտքերից, նա հնարաւորութիւն կունենայ իւր օգտաշատ նպատակներն իրագործել աւելի ընդարձակ չափով:

Եկ. Հոգաբարձութեան ընդհանուր ժողովը, որ կայացել է տարւոյս յունիսի 1-ին, մանրամասն կերպով քննութեան առնելով Հոգաբարձութեան գործունէութիւնը, Քննիչ յանձնաժողովի զեկուցումը և մի քանի դիտողութիւններ անելուց յետոյ, որոնց առթիւ արւում են բաւարար բացատրութիւններ, տալիս է իւր հաւանութիւնը և սրտագին շնորհակալութիւն յայտնում Հոգաբարձութեան Նախագահ պ. Անդրէաս Սալթիքեանին և միւս անդամներին նրանց արդիւնաւէտ ծառայութեան համար:

Ցանկանանք այդ համակրելի հաստատութեանը առաջադիմութիւն և յարատևութիւն, որ իւր գործունէութեամբ ու համակրելի ուղղութեամբ պատիւ կարող է բերել ոչ միայն ն. Նախիջևանի այդ մի փոքրիկ գաղութին, այլ և ամբողջ ուսանայոցս:

Մ. վ.